ԳԵՀԵՆԻՑ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Ե. Գ. ԱՂԱՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

Հայ ժողովրդի դարավոր պատմությունը, հիրավի, ծանր գոյամարտի պատմություն է։ Ազատագրական մաքառումներում և ինքնագոյատևման պայքարում մեր ժողովուրդը պաշտպանել է իր հայրենիքը, սեփական օջախը, բազմադարյան մշակույթը։ Եկել, անցել-գնացել են օտար նվաճողները, չորս դին սփռելով հուր ու արյուն, սով ու մահ, սակայն մնացել է հայ աշխատավորը՝ հողի մշակը, արհեստավորը, մտավորականը։ Մնացել է հայ ժողովուրդը, որի դարավոր հարատևումն արդեն նրա մղած ինքնապաշտպանական գոտեմարտերի փայլուն առհավատչյան է։

Եվ այնուամենայնիվ, պատմական ճակատագրի դժբախտ բերումով 60 տարի առաջ, առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, երիտթուրքական չարդարարների մշակած ծրագրով հայ ժողովրդի արևմտյան հատվածը բնավեր եղավ։ Նույն բախտն էր վիճակվելու նաև մեր ժողովրդի արևելյան հատվածին և այնտեղ ծվարած արևմտահայ գաղթականությանը 1918—1920 թթ., եթե նրանց օգնության չհասնեին ռուս մեծ ժողովուրդն ու փրկարար Հոկտեմբերը։

* * *

Երիտթուրքական կառավարությունը հայերի նկատմամբ իր ցեղասպան քաղաքականությունը կենսագործեց նախօրոք խնամքով մշակված ծրագրով։ Առաջին համաշխարհային պատերազմը և դաշնակից Գերմանիայի աջակցությունը բարենպաստ պայմաններ ստեղծեցին այդ մարդակուլ ծրագրի իրականացման համար։

Թուրքիայի հայ բնակչության ոչնչացման պլանը մշակվեց և հաստատվեց ներքին գործերի մինիստր Թալեաթի ղեկավարությամբ կայացած երիտթուրքական կոմիտեի գաղտնի խորհրդակցությունում։ Խորհրդակցությունում առաջինը ձայն վերցրած երիտթուրքական կուսակցության գաղափարախոս Նազիմը ցինիկաբար հայտարարեց. «Պետք է գործել արագ և վճռական։... Հարկավոր է գործել և գործել արագ։ Եթե բավարարվենք միայն մասնակի կոտորածով, ինչպես տեղի է ունեցել 1909 թվականին Ադանայում և ուրիշ շրջաններում, ապա այդ օգուտի փոխարեն վնաս կբերի, քանի որ ռիսկ կանենք արթնացնել նաև այլ տարրերին՝ արաբներին ու քրդերին, որոնց նույնպես պատրաստվում ենք մաքրել ճանապարհից. վտանգը կմեծանա եռակի և կդժվարացնի մեր մտադրության իրագործումը։ Ես մի քանի անգամ ասել եմ ձեզ. այս ժողովում ես կրկնում եմ. եթե գտումը ընդհանուր և վերջնական չլինի, ապա վնասը, օգուտի փոխարեն, անխուսափելի է։ Հայ ժողովուրդը պետք է հիմքից ոչնչացնել՝ այնպես, որ ոչ մի հայ մեր հողի վրա չմնա և այդ անունն իսկ մոռացվի։ Այժմ պատերազմ է. այդպիսի հարմար առիթ այլևս չի լինի։

Մեծ տերությունների միջամտությունը և համաշխարհային մամուլի աղմկալից բողոքները աննկատ կմնան, իսկ եթե հայտնի դառնան, ապա նրանք կկանգնեն արդեն կատարված փաստի առաջ, և դրանով էլ հարցը կսպառվի։ Այս անգամ մեր գործունեությունը պետք է ստանա հայերի համընդհանուր բնաջնջման բնույթ. անհրաժեշտ է բնաջնջել բոլորին, մինչև վերջինը»[1]։

Հայ ժողովրդի համար ողբերգական հետևանքներ ունեցած այս խորհրդակցության բոլոր մասնակիցները «առանց որևէ բացառության» քվեարկում են «բոլոր հայերին լիովին ոչնչացնելու օգտին»[2]։ Որոշման իրագործումը հանձնարարված էր ոճրագործներից ու բանդիտներից բաղկացած հատուկ կազմակերպության, իսկ նրա ղեկավարությունը՝ «եռյակ գործադիր հանձնախմբին»՝ Նազիմին, Բեհաեդդին Շաքիրին և լուսավորության մինիստր՝ Շյուքրիին։

Այդ որոշման համաձայն, երիտթուրքական կառավարությունը 1915 թ. ապրիլի 15-ին տեղական իշխանություններին հայերի ոչնչացման մասին իջեցրեց հրահանգ, որի տակ դրված էին Թալեաթի, ռազմական մինիստր Էնվերի և Նազիմի ստորագրությունները։

Առաջնորդվելով մանրակրկիտ մշակված պլանով, թուրքական ջարդարարները իրենց ոճրագործ ծրագրի իրականացումը սկսեցին բանակ զորակոչված հայերի ոչնչացումով՝ կանխելու համար հայ բնակչության կողմից դիմադրության որևէ փորձ։ Հայ զինվորները նախ զինաթափվեցին, նրանցից կազմվեցին բանվորական գումարտակներ, որոնք օգտագործվում էին ճանապարհների կառուցման և այլ ծանր աշխատանքներում։ 1915 թ. ապրիլին կար 120 այդպիսի գումարտակ՝ յուրաքանչյուրում 300—500 մարդ։ Այնուհետև թուրքական ջարդարարները ձեռնամուխ եղան անզեն հայ զինվորների ոչնչացմանը. «Թուրքական կանոնավոր գնդերը... անսպասելիորեն հարձակվում էին այդ դրուժինաների (հայ գումարտակների) վրա, որոնք խաղաղ աշխատում էին բրիչներով, լինգերով ու բահերով և մինչև նրանք ուշքի կգային՝ գնդակոծում էին բոլորին։ Եթե որևէ մեկը փորձում էր դիմել փախուստի, նրան հետապնդում էին հեծյալ թուրքերը և սրախողխող անում կամ գնդակահարում»[3]։ Այս եղանակով ոչնչացվեցին հազարավոր հայ անզեն զինվորներ։

Երիտթուրքական ջարդարարները ձեռնարկեցին արևմտահայ մտավորականության ու գործիչների ոչնչացումը։ Սկսած 1915 թ. ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերից միայն Կոստանդնուպոլսում մի քանի օրվա ընթացքում ձերբակալվեցին շուրջ 600 հայ մտավորականներ, որոնք, բացի ութ հոգուց, գազանաբար սպանվեցին աքսորի ճանապարհին[4]։ Նույնպիսի ճակատագիր վիճակվեց նաև Թուրքիայի մյուս քաղաքների հայ մտավորականներին։ Թուրքական յաթաղանի զոհ դարձան նշանավոր գրող, հրապարակախոս, իրավաբան, հասարակական գործիչ, մեջլիսի դեպուտատ Գրիգոր Զոհրապը, մեջլիսի դեպուտատ Վարդգեսը, մեծատաղանդ բանաստեղծներ Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն

---

[1] «Геноцид армян в Османской империи», сборник документов и материалов, под редак. проф. М. Нерсисяна, Ереван, 1966, стр. 363.

[2] Նույն տեղում, էջ 366։

[3] Гиббонс Герберт-Адамс, Последние избиения в Армении, факты и ответственность, Петербург, 1916, стр. 12—13.

[4] Lepsius J., Deutschland und Armenien 1914—1918. Sammlung diplomatischer Aktenstüke, Potsdam, 1919, S. XX.

Սևակը և շատ ուրիշ անվանի գործիչներ ու մտավորականներ[5]։ Ցեղասպանության զոհերից էր նաև հանճարեղ Կոմիտասը։

Հայ զինվորության և մտավորականության ոչնչացումը հեշտացրեց երիտթուրքերի հրեշավոր պլանների իրագործումը։ Դեռ 1915 թ. ապրիլի սկզբին երիտթուրքական կոմիտեի վերը հիշատակված որոշման հիման վրա տեղական իշխանությունները սկսեցին զինաթափել Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայերին։ Զինաթափելուց հետո, քանի որ «քրիստոնեական ազգաբնակչությունը համակրում է Ռուսաստանից եկող զորքերին», հրամայվեց նրան «ռուսական զորքերի սպառնալիքի տակ գտնվող շրջաններից» քշել Միջագետք։ Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, դա ոչ թե աքսոր էր, այլ բնակչության իսկական զանգվածային կոտորած, և բացի այդ, հայերն «աքսորվում» էին երկրի անգամ այնպիսի շրջաններից (Տրապիզոն, Խարբերդ, Սեբաստիա), որոնց չէր սպառնում ռուսական զորքերի ներթափանցման որևէ վտանգ։ Հայերի աքսորը սպանդի վերածելու խնդրին համապատասխան Թալեաթը գաղտնի կարգադրությամբ հրահանգեց վիլայեթների իշխանություններին՝ Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայ բնակչության ոչնչացումը իրագործել՝ հաշվի չառնելով ոչ սեռը, ոչ էլ տարիքը. «Կառավարությունն իր վրա է վերցնում ամբողջ պատասխանատվությունը և հրամայում չխնայել անգամ օրորոցի երեխաներին»[6],— կարգադրում էր արյունարբու Թալեաթը։

Արևմտահայության զանգվածային աքսորը սկսվեց 1915 թ. մայիսին երկրի ավելի քան 50 վայրերից։ «Մայիսից մինչև հոկտեմբեր,— գրում է Գիրոնսը,— Օսմանյան կառավարությունը սիստեմատիկաբար կիրառում էր մի պլան, որն ավելի դժոխային էր, քան ամենասարսափելի չարդը։ Ամբողջ Փոքր Ասիայով մեկ հրամաններ էին ուղարկվում հայ ազգաբնակչությանը Միջագետք աքսորելու մասին։ ... Ոչ մի գյուղ, անգամ աննշան, չէր մոռացվել։... Բացառություն չէր արվում ոչ հիվանդների, ոչ ծերերի, ոչ էլ հղի կանանց համար»[7]։

Աքսորյալներին խստիվ արգելվում էր իրենց հետ վերցնելու նույնիսկ ամենաանհրաժեշտ իրերն ու հագուստեղենը։ Աքսորելուց անմիջապես հետո նրանց տներն ու ունեցվածքը բռնագրավվում ու բաժանվում էին մահմեդականներին։ Աքսորի հենց սկզբից տղամարդկանց բաժանում էին կանանցից, իսկ ընտանիքի անդամներին՝ իրարից։ Առաջին հերթին հաշվեհարդար էին տեսնում տղամարդկանց հետ։ 15—70 տարեկան տղամարդկանց, առանձին-առանձին խմբերով (շուրջ մի քանի հարյուր հոգի ամեն մի խմբում) առանձնացնում էին և ապա գիշերով ոչնչացնում։ Այդ դժբախտների առաջին խումբը ոչնչացվեց 1915 թ. հունիսի 23-ի գիշերը[8]։

Աքսորի ճանապարհները գերեզմանոցներ դարձան հարյուր հազարավոր արևմտահայերի համար։ Նրանք մահանում էին սովից, ուժասպառությունից և ծարավից, իսկ ովքեր այլևս չէին կարողանում շարժվել, գնդակահարվում էին կամ սվինահարվում քարավաններն ուղեկցող թուրքական ժանդարմների և զինվորների կողմից։ Աքսորյալների վրա շարունակ հարձակումներ էին գոր-

---

5 Մանրամասն տե՛ս Թուրքահայ աղետը։ Պատմական փաստաթղթեր, Էջմիածին, 1919, էջ 22։

6 Ե. Ղ. Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914—1918 թթ., Երևան, 1964, էջ 238։

7 Гиббонс Герберт-Адамс, указ. соч., стр. 13—14.

8 «Геноцид армян», стр. 261.

ծում ավազակախմբերը, որոնք անխնա կողոպտում ու թալանում էին նրանց, որոնց միակ մեղքը այն էր, որ հայ էին ծնվել։

Հայերի ոչնչացումն արագացնելու նպատակով թուրքական իշխանություններն արգելել էին մահմեդական բնակչությանը՝ աքսորյալներին ուտելիք վաճառել։ Աքսորի շատ հատվածներում՝ Քեմախ-Բողազի մոտ, Եփրատի ափին և Երզնկայի ու Խարբերդի արանքում տեղի ունեցան ուղղակի ղանգվածային գնդակահարություններ։

Երկրի բոլոր ծայրերից Հալեպ քշված հայերի քարավանների մնացորդները ուղարկվեցին Տեր-Զորի անապատը, որտեղ կոտորածը ավելի ահավոր կերպարանք ընդունեց։ Այն կատարվում էր համապատասխան Թալեաթի հրամանի, որտեղ ասված էր. «Աքսորի վերջը հասավ։ Սկսեք գործել համաձայն նախորդ հրամանների և դրանք կատարեք, որքան կարելի է արագ»։ Ի կատարումն այդ հրամանի՝ Տեր-Զորի աքսորյալներին խմբերով դուրս էին բերում իբր թե Մոսուլ ուղարկելու։ Ցեղասպանները քաջ գիտեին, որ հիվանդ ու մերկ, կիսակենդան աքսորյալներից գրեթե ոչ մեկը ի վիճակի չէ ճանապարհ կտրելու և նահատակվելու է։ Եվ, իրոք, ճանապարհին նրանք ընկան սովից, հյուծվածությունից ու ցրտից, կամ թուրքական ջարդարարների գնդակներից ու սվիններից։ Տեր-Զորի անապատում այս ամենի հետևանքով զոհվեցին ավելի քան 200 հազար հայեր։

Տեղահանված և աքսորի քշված հայության ճնշող մեծամասնությունը տեղ չհասավ։ Այսպես, օրինակ, Կարինի վիլայեթից Մոսուլ աքսորված 30 հազար հայերից տեղ հասավ միայն 4—5 հազար հոգի՝ կանայք և երեխաներ։ Կարինի հայությունից կենդանի մնաց ընդամենը 2 հազար մարդ[9]։ Եթե Կարինի վիլայեթի հայերը ոչնչացվեցին «աքսորի» միջոցով, ապա Բաղեշի, Մուշի, Դիարբեքիրի ու Սղերդի հայերը կործանվեցին տեղում։ Այսպես, օրինակ, Բաղեշի 18 հազար հայերից կենդանի մնացին միայն 300—400 հոգի, այն էլ մահմեդականություն ընդունելու շնորհիվ[10]։ Սվաս քաղաքում ապրող 25 հազար հայերից կենդանի մնացին միայն 125 ծերեր և երեխաներ։ Ականատեսների վկայությամբ, թուրքական դահիճները հայերին սպանում էին ամենադաժան խոշտանգումների ենթարկելով։ Այսպես, Խարբերդում հայերին կենդանի անդամահատում էին, նրանց ոտքերի տակ մեխեր խփում և այլ տանջանքների ենթարկում։ Հաճախ հայերին կենդանի թաղում էին, ողջակիզում, նետում գետերն ու ջրհորները։

Հայ ժողովրդի նկատմամբ կազմակերպված աննկարագրելի այդ ոճիրներին մասնակցում էին նաև ամենահումանիստական մասնագիտության տեր մարդիկ՝ թուրք բժիշկները։ Նրանք հայ զինվորներին ու քաղաքացիներին զանազան պատրվակներով բռնությամբ սրսկում էին բծավոր տիֆ հարուցող շիճուկ։ Այդ ճիվաղներից էին Երզնկայում գործող Համիդի բեյը, երրորդ բանակային կորպուսի գլխավոր բժիշկ Թեֆիկ Սալիմը և նրան ստորադրյալ բժիշկները։ Նույն եղանակով իրենց բժիշկ հորջորջող թուրք մարդասպանները սպանեցին 227 հայ կոլեգաների, որոնցից շատերն իրենց ուսուցիչներն էին։

Ղանգվածային ջարդերից ու կոտորածներից բացի, երիտթուրքական ջարդարարները հայկական տարրը վերացնում էին հավատափոխության և բռնի

---

[9] „La voix d'Armenie". 1918, № 7, p. 217.

[10] Ե. Ղ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 248.

թուրքացման միջոցով. հայերը ստիպված դիմում էին այդ քայլին իրենց ֆիզիկական գոյությունը փրկելու համար։ Աղբյուրների համադրությունը վկայում է, որ կոտորածներից փրկվելու համար մահմեդականություն են ընդունում մոտ 200 հազար հայեր՝ գլխավորապես ծերեր, կանայք և երեխաներ։

Այսպիսով, երիտթուրքական կառավարության հայաջինջ քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանը զրկվեց իր դաբավոր բնակիչ հայերից։ Ավելի քան 2,6 միլիոն արևմտահայերից 1,5 միլիոնը դարձավ թուրքական սրի անմիջական զոհը, իսկ նրանց մազապուրծ փրկված մասը իր հացն հանապազօրյա ճարելու հույսով սփռվեց երկրագնդով մեկ։

* * *

Չնայած ստեղծված դժոխային պայմաններին, Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում հայ բնակչությունը, առանց դրսի օգնության, դիմեց ինքնապաշտպանական մարտերի, որոնց շնորհիվ հնարավոր եղավ որոշ վայրերում նկատելի թվով հայերի փրկել թուրքական յաթաղանից։ Բանտերից, բանակից, աքսորի ճամփից փախած հայերը խմբերով ապաստանում էին անմատույց լեռներում ու ամրություններում և թուրքական ջարդարարների դեմ պայքար ծավալում։ Նրանք հաճախ հարձակվում էին աքսորյալների քարավանների վրա և փրկում նրանց անխուսափելի մահից։

Հայերի ինքնապաշտպանական կռիվների փառավոր էջերից է Վանի հերոսական պաշտպանությունը։ Այդ կռիվներին Վան քաղաքի հայերի հետ մասնակցում էին նաև շրջակա հայկական գյուղերի 17 հազար բնակիչներ։ Վանեցիների պայքարը տևեց 1915 թ. ապրիլի 20-ից մինչև մայիսի 19-ը՝ մինչև ռուսական զորքերի մուտքը Վան։ Այդ ընթացքում քաղաքի վրա արձակվեց 16 հազար արկ, սակայն թուրքական ջարդարարներին չհաջողվեց ընկճել պաշարյալների հերոսական ոգին։ Թուրքական զորքերի ղեկավարությունն իր վրա վերցրած գերմանական մի սպա, տեսնելով վանեցիների կատաղի դիմադրությունը, հայտարարել է. «Ես չէի սպասում այսպիսի դիմադրություն»[11]։ Վանի հերոսամարտերի շնորհիվ բնակչության մի մասին հաջողվեց խուսափել կոտորածից։

Թուրքական ջարդարարներին կատաղի դիմադրություն ցույց տվեցին նաև Մուշի վիլայեթի հայերը։ Վիլայեթի 59 հազար հայերից փրկվեցին միայն 9 հազարը, որոնք անցան Սասուն և ապաստանելով լեռներում՝ շարունակեցին պայքարը՝ հանուն իրենց գոյատևման։ Նույն կերպ վարվեցին նաև Սասունի հայերը, որոնք մի քանի ամսվա ընթացքում դիմադրում էին Սասուն ներխուժել ցանկացող թուրքական 30 հազարանոց կանոնավոր բանակին։ Թուրքերը Սասուն ներխուժեցին միայն նրա պաշտպանների ուժասպառումից հետո և անմիջապես սրի քաշեցին կենդանի մնացած սակավաթիվ քաջերին։

Ֆիզիկական գոյատևման համար հայ ժողովրդի մղած պայքարի ամենաուշագրավ և դրամատիկ պահերով լի դրվագներից է մուսալեռցիների հերոսամարտը։ Մոտ 5 հազար հայեր հերոսաբար դիմադրում էին մինչև ատամները զինված 20 հազարանոց թուրքական զորքերին։ Պաշտպանական կռիվները սկսվեցին 1915 թ. հուլիսի 27-ին և տևեցին 53 օր։ Պաշարյալները փրկվեցին միայն հրաշքով՝ ֆրանսիական ռազմանավերի օգնությամբ[12]։

---

11 Анри Барбю, В стране ужаса. Мученица Армения, Тифлис, 1919, стр. 75—76.

12 ԿՊՌՊԱ, ֆ. 2100, ց. 1, գ. 646, թ. 77։

Թուրք ջարդարարների դեմ համառ ինքնապաշտպանական կռիվներ մղեցին նաև Շապին-Կարահիսարի և Ուրֆայի հայերը։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական դահիճների դեմ արևմտահայության մղած ինքնապաշտպանական կռիվները հանուն իր գոյատևման հայ ժողովրդի մղած դարավոր և հերոսական պայքարի փառապանծ էջերից են։

* * *

Իմպերիալիստական պետությունների և Թուրքիայի հայահալած քաղաքականությունը խստիվս մերկացվել ու դատապարտվել է բոլշևիկյան կուսակցության կողմից։ Բոլշևիկներին մտահոգում էր այն հարցը, թե ինչ կլինի հայ ժողովրդի վիճակը Առաջավոր Ասիայում նրա համար ստեղծված անչափ ծանր պայմաններում, ժողովուրդ, որը ստրուկ է դարձել թուրք բեկերի և պաշտոնյաների ձեռքին, որի 85%-ը աշխատավոր գյուղացիությունն է կազմում և որից «ֆեոդալները հրետանու և հեծելազորի օգնությամբ են գանձում հարկերը... որոնց չափը որոշվում է նահանգապետի կամքով»[13]։

«Պրավդան» երիտթուրքերի իշխանությունը բնութագրեց որպես լիբերալ բուրժուազիայի «արատավորություն» ու իշխանության գլուխն անցած «ռազմա-սպայական կաստայի» շահերի արտահայտիչ։ Այդ իշխանության ազգայնականությունն ու սլավոններին, հայերին և մյուս ազգերին թուրքացնելու քաղաքականությունը «ավելի գռեհիկ ու հակամարդկային բնույթ ընդունեց, քան այդ տեղի էր ունենում Աբդուլ Համիդի օրոք»[14]։ 1914 թ. «Պուտ պրավդին» թերթը նշում է, որ «Թուրքիայում գոյություն ունեցող գազանությունների դեմ պրոլետարիատը քանիցս իր վրդովմունքն է հայտնել։ Առաջավոր բանվորները Թուրքիայում տիրող կարգերի վերափոխումը միանգամայն անհրաժեշտ են գտնում»[15]։

Միջազգային կոմունիստական և բանվորական շարժման գործիչները ևս դատապարտեցին հայերի ցեղասպանությունը Թուրքիայում։ Այսպես օրինակ, կոմունիստական շարժման ականավոր գործիչ Վ. Կոլարովը Կոմինտերնի 3-րդ կոնգրեսում ունեցած ելույթում նշեց, որ հայ ժողովուրդը իր ողբերգական պատմության ընթացքում դարձել է թուրքական բարբարոսական կարգերի զոհը և ապարդյուն օգնություն խնդրել այսպես կոչված քաղաքակիրթ պետություններից։ «Այդ կոչերի արդյունքը միայն նոր արյունահեղություններն էին լինում։ Վերջին անգամ, եվրոպական պատերազմի ժամանակ հայ ժողովուրդն Անտանտի տերություններին ցույց տված իր օգնությամբ ցանկանում էր ազատություն և ապրելու իրավունք ձեռք բերել, սակայն նա խաբվեց իր սպասելիքների մեջ։ Նա նորից դարձավ մոլեռանդության զոհ։ Այդ արյունահեղությունից հետո հայ ժողովուրդը իր հայացքը հառեց Ռուսաստանին և հետևեց նրա պրոլետարիատի օրինակին...»[16]։

1916 թ. հուլիսին Կարլ Լիբկնեխտը գրել է, որ Գերմանիան, որպես Թուրքիայի դաշնակից, «իր ձեռքերը շաղախեց հայերի արյամբ և այս պատերազմի

---

13 «Рабочий путь», 27. VII. 1913.

14 «Правда», 27. VII. 1912.

15 «Путь Правды», 1. II. 1914.

16 «Третий Всемирный конгресс Коммунистического Интернационала». Петроград. 1922, стр. 469.

ժամանակ անչափ մեծացրեց իր մեղքը, իրագործելով դժբախտ հայ ժողովրդի դաժան կոտորածը»[17]։

Հայ ժողովրդի մեծ բարեկամ, կոմունիստական կուսակցության ականավոր գործիչ Սերգո Օրջոնիկիձեն 1925 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում սովետական կարգերի հաստատման հնգամյակին նվիրված ճառում ընդգծել է. «Նոր պատմության մեջ քիչ ժողովուրդներ կան, որոնք տված լինեն այնքան մեծ զոհեր, ինչպես հայերը, և քիչ են այն երկրները, որտեղ այնքան արյուն լինի թափված, ինչքան Հայաստանում»[18]։

Կոմունիստական կուսակցության ականավոր գործիչ Ս. Մ. Կիրովը 1916 թ. դատապարտելով թուրքական բարբարոսությունը հայերի հանդեպ, կոչ էր անում օգնության ձեռք մեկնել Ռուսաստանով մեկ ցրված հայ գաղթականներին։ «Փախստականների մոտ» հոդվածում Ս. Մ. Կիրովը գրել է. «Եթե պատերազմը ոմանց համար սարսափի հետ զուգակցվող իսկական դժբախտություն է, ապա դա դժբախտություն է անշուշտ այն մարդկանց համար, ովքեր ստիպված են թողնել հարազատ օջախը և ապաստան որոնել օտար վայրերում, օտար մարդկանց մեջ։ Ռուսական ամբողջ երկրում տարածվել են փախստականները։ Հայերը կորցրել են իրենց զավակներին, եղբայրները չգիտեն, թե որտեղ են իրենց քույրերը, ամբողջ ընտանիքներ քայքայվել են և կորցրել իրենց ամբողջ ունեցվածքը։ Դրությունը, իրոք որ սարսափելի է...»[19]։ «Գուցե միայն հետո,— շարունակում է նա,— երբ մարդկային արյան գետերը կանգ կառնեն, նոր մի Դանթե կնկարագրի միլիոնավոր մարդկանց սարսափելի տանջանքների պատկերը։ Եվ այդ պատկերը կմտնի մեծ պատերազմի պատմության մեջ, սակայն բոլորը չէ, որ ուժ կունենան ուշադիր դիտել այն, քանի որ նա ամբողջությամբ համատարած մղձավանջ կարտահայտի։ Եվ այդ մասին մենք, այստեղ, թիկունքում նստածներս պետք է միշտ հիշենք։ Չէ՞ որ մենք առաջինը պետք է օգնության ձեռք մեկնենք կենդանի մնացած, իրենց մոխրակույտերը թողած հայ փախստականներին։ Նրանց թիվը շատ է և դրանով էլ ավելի ծանր է նրանց վիճակը»[20]։

Մեծ գրող Մաքսիմ Գորկին բարձր է գնահատել հայ ժողովրդի ազատագրական պայքարը։ Նա, դատապարտելով թուրքական ջարդարարների և իմպերիալիստական պետությունների արյունոտ գործարքը հայ ժողովրդի հանդեպ, գրել է. «Դժվար է վերհիշել այդ եռանդուն ժողովրդի ապրած բոլոր ողբերգությունները։ Նման փաստերը չտեսնված արագությամբ ու խորամանկությամբ են մոռանում պարոն «հումանիստները», իդեալիստները, «կուլտուրայի» պաշտպանները, որոնք հենվում են ժլատության, նախանձի, ստրկության ու ժողովրդական մասսաներին ցինիկաբար ոչնչացնելու վրա»։ Այդ «կուլտուրայի» պաշտպանների կեղծիքն ու երեսպաշտությունը իրենց էությամբ ու կեղտով,— շարունակում է նա,— հասնում են այնպիսի ցնորամտության ու հանցագործության, որի արժանի պատիժը դժվար է գտնել[21]։

---

17 Карл Либкнехт, Мой процесс по документам, Петроград, 1918, стр. 51.

18 «Заря Востока», 1. XII. 1925.

19 «Терек», 25. II. 1916.

20 Նույն տեղում։

21 М. Горький, Соч., т. 17, стр. 134.

1916 թ. ապրիլի 9-ին Անատոլ Ֆրանսը, հանդես դալով հայկական կոտորածի հարցի շուրջը, դատապարտեց թուրքական վայրենի դեսպոտիզմը։ «Մենք հասկացանք,— հայտարարեց նա,— որ թուրք ճնշողի և հայի երկար ու անհավասար պայքարը դեսպոտիզմի պայքարն է, դա բարբարոսության պայքարն է արդարության ու ազատության ոգու դեմ։ Եվ երբ մենք տեսանք Թուրքիայի այդ զոհը՝ դեպի մեզ հառած նրա մարող աչքերով, որոնց մեջ փայլատակում էր հույսի կայծը, մենք հասկացանք վերջապես, որ այդ մեր քույրն է մահանում Արևելքում և մահանում է հենց նրա համար, որ նա մեր քույրն է, որի հանցանքն այն է, որ նա կիսել է մեր զգացումները, սիրել է այն, ինչ մենք ենք սիրում, մտածել է այնպես, ինչպես մենք, հավատացել է նրան, ինչին մենք ենք հավատում, և մեզ նման գնահատել է իմաստությունը, արդարությունը, պոեզիան, արվեստը։ Այդպիսին էր նրա անքավելի հանցանքը»[22]։

Մեծ մտածող ու հումանիստ Անատոլ Ֆրանսը հայ ժողովրդի համար այդ ծանր ու ճգնաժամային օրերին իր ձայնը բարձրացրեց ի պաշտպանություն նրա, հույս ու հավատ ներշնչելով նրա վերածննդի նկատմամբ։ «Հայաստանը հոգևարքի մեջ է, բայց նա կվերածնվի։ Այն ոչ մեծ քանակությամբ արյունը, որը նա դեռ պահպանել է, շատ թանկարժեք արյուն է, որից հերոսական սերունդ կծնվի։ Այն ժողովուրդը, որը չի ուզում մեռնել, երբեք չի մեռնի...»[23]։

Անրի Բարբին որպես ֆրանսիական «Լը ժուռնալ» թերթի թղթակից 1916—1917 թթ. լինելով Արևմտյան Հայաստանում ու Միջագետքում և ականատես դառնալով երիտթուրքերի բարբարոսություններին, դրել է, որ Գերմանիան ոչ միայն չարգելակեց, այլև օգնեց դահիճներին, «տալով նրանց խորհուրդներ և փորձառու ցուցումներ»[24]։

Նորվեգացի ականավոր հասարակական գործիչ և գիտնական Ֆրիտյոֆ Նանսենը նշել է, որ երիտթուրքերի ղեկավարները հասան այնպիսի մարդակերության, որ հայերին ջարդելու հրամանում իրենց վրա էին վերցնում ոչ միայն կատարվող գազանությունների ամբողջ պատասխանատվությունը, այլ նաև այն «ամոթանքը, որ սև բիծ է թողնում Օսմանյան պատմության վրա»[25]։

Հայկական մեծ եղեռնի կապակցությամբ բարձրացնելով իր բողոքի ձայնը, ականավոր գիտնական Ն. Մառը 1916 թ. գրել է. «Հայ ժողովուրդը անխոնջ կերպով պահպանում էր այն ջահը, որ վառվել էր մարդկային քաղաքակրթության արշալույսի բռնկած խարույկից»[26]։

Սովետական ականավոր արևելագետ, ակադեմիկոս Վ. Ա. Գորդլևսկին ռուսական զորքերի նահանջի ժամանակ՝ 1917 թ. ականատես է եղել, թե ինչպես կոտորածից փրկված հայերը, ամեն ինչ թողած, ռուսական զորքի հետ շարժվում էին դեպի Անդրկովկաս. «Ահա եզը դանդաղ քաշում է ճռռացող սայլը, որի վրա դարսված են կահ-կարասիքը։ Իսկ կողքից քայլում է մի կին՝ մեկ ձեռքին հայելի, իսկ մյուսում՝ սուր։ Դատեցեք ինքներդ՝ ի՞նչն է նրա մեջ ավելի ուժեղ՝ կոկետության բնա՞զդը, թե՞ ինքնապաշտպանության»։ Ապա նա շարու-

---

22 «Геноцид армян», стр. 394—395.

23 Նույն տեղում։

24 «Геноцид армян», стр. 406.

25 Նույն տեղում, էջ 487։

26 Ս տ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, Նիկոլայոս Մառը և հայկական ճարտարապետությունը, Երևան, 1969, էջ 32։

նակում է. «Եվ ես հավատում եմ, կանցնի մղձավանջի պես ծանր այդ ժամանակը և մարդը ամոթ կզգա... որ հարյուր հազարավոր անմեղ հայեր թուրքական գազանությունների զոհ դարձան։ Հայաստանի զավակները հսկայական արիությամբ դեպի մահ էին գնում։ Նրանք գիտեին, որ մահվան միջով հայ ժողովուրդը կյանքի, լավագույն կյանքի կվերածնվի։ Ու կապրի Հայաստանը։

Իմ նոր հայրենիք,
Հզոր հայրենիք,—

ինչպես իր ժամանակին ոգեշնչված երգել է Հ. Թումանյանը՝ հայոց պոեզիայի պատրիարքը»[27]։

* * *

Եվ ապրեց հայ ժողովուրդը, որովհետև դարավոր մաքառումներից հետո նա իր փրկությունը, սոցիալական ու ազգային ազատագրությունը գտավ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի մեջ։ 1917 թ. Լենինի ստորագրությամբ հրապարակված «Թուրքահայաստանի մասին» դեկրետը ի լուր աշխարհի հայտարարում էր Արևմտյան Հայաստանի ազատ ինքնորոշման մասին։ Սակայն թուրքական զորքերի հարձակման, Սովետական Ռուսաստանի դեմ Արևմուտքի իմպերիալիստների կազմակերպած ինտերվենցիայի և Անդրկովկասի հակահեղափոխական ուժերի դավաճանության հետևանքով այդ դեկրետի իրականացումը խափանվեց։ Արևելյան Հայաստանը դաշնակցական բախտախնդիրների իշխանության օրոք (1918—1920) կատարյալ քայքայման հասավ։ Սովն ու համաճարակային հիվանդությունները, իմպերիալիստական տերությունների նոր հարձակումներն ու գաղութային քաղաքականությունը երկիրը կանգնեցրին ահավոր ծանր կացության առջև։ Ֆիզիկական բնաջնջման վտանգ էր ստեղծվել նաև Արևելյան Հայաստանում, երբ վերջապես 1920 թ. նոյեմբերին Կարմիր բանակի օգնությամբ այստեղ հաստատվեց սովետական իշխանություն։ Հայ ժողովրդի պատմության մեջ նոր, պայծառ էջ բացվեց։

Մեծ Լենինի ղեկավարությամբ Սովետական Ռուսաստանը եղբայրական օգնության ձեռք մեկնեց իմպերիալիզմի լծից ազատագրված հայ ժողովրդին։ Հայաստան ուղարկվեցին մեծ քանակությամբ մթերքներ, դեղորայք, մեքենաներ, դրամ, սերմացու և այլ ապրանքներ։ Ադրբեջանից ստացվում էին նավթամթերքներ, իսկ մյուս սովետական հանրապետություններից՝ անհրաժեշտ այլ մթերքներ։

Եղբայրական ջերմ ու անշահախնդիր օգնության շնորհիվ Սովետական Հայաստանը վերածննդի փառահեղ ուղի անցավ և կարճ ժամանակում դարձավ առաջավոր սոցիալիստական հանրապետություն։ Ծանր ինդուստրիայի, կոլտնտեսային գյուղատնտեսության, կուլտուրայի ու գիտության արագ զարգացումը հայ ժողովրդի համար ստեղծեց երջանիկ ու ապահով կյանք։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ ժողովուրդը, ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների հետ միասին, ահեղ մարտերի մեջ մտավ գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ և իր լման մտցրեց թշնամու ջախջախման գործում։ Ինչպես նշել է Լ. Ի. Բրեժնևը, այդ հաղթանակը հետևանք էր այն բանի, որ սովետական ժողովուրդները «կիսում են թե հաղթանակների բերկրանքը և թե

---

27 В. А. Гордлевский, Избр. соч., т. 3, М., 1962, стр. 129—130.

անհաջողությունների գառնությունը, ապրում են ընդհանուր խոհերով, ընթանում մեկ ճանապարհով»[28]։

Պատերազմի ժամանակ 103 հայորդիներ արժանացան Սովետական Միության հերոսի, իսկ 60 հայ զինվորականներ՝ գեներալի կոչման։ Սովետական ժողովուրդը հպարտանում է Սովետական Միության մարշալ Հ. Բաղրամյանի, Սովետական Միության նավատորմի ծովակալ Ի. Իսակովի, ավիացիայի մարշալ Ա. Խուդյակովի (Խանֆերյանց), զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Հ. Բաբաջանյանի սխրանքներով և զորավարական տաղանդով։ «Պատերազմի տարիներին,— ասել է Լ. Ի. Բրեժնևը,— Հայաստանի աշխատավորները, հայ ռազմիկները ցուցաբերեցին մեծ արիություն, տոկունություն և հերոսություն»[29]։

Այժմ սովետական ժողովուրդը և աշխարհի ողջ պրոգրեսիվ մարդկությունը, տոնելով ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 30 տարին, նորից ու նորից դատապարտում են ցեղասպանության ռասիստական ոճրագործ քաղաքականությունը։

Ետպատերազմյան տարիներին սովետական կենսարար կարգերի շնորհիվ Սովետական Հայաստանը մեր երկրի մյուս եղբայրական հանրապետությունների նման խոշոր հաջողությունների հասավ։

Բուռն տեմպերով զարգացավ արդյունաբերությունը։ Սովետական Հայաստանի արդյունաբերության բարձր զարգացման մասին է վկայում այն փաստը, որ 1970 թ. տվյալներով նրան բաժին էր ընկնում ամբողջ հասարակական արտադրանքի 68%-ը, նախասովետական շրջանի 14%-ի դիմաց։ Հայաստանը, որը նախասովետական շրջանում ներմուծում էր անգամ թել ու ասեղ, այժմ արդյունաբերական բարդ արտադրանքի մի շարք տեսակներով հասել է համաշխարհային ստանդարտների մակարդակի։ Սովետական Հայաստանը տնտեսական կապեր ունի աշխարհի շուրջ 90 երկրների հետ և այդ երկրներն է ուղարկում ավելի քան 200 արտադրատեսակ։ Հայկական ՍՍՀ արդյունաբերական ձեռնարկությունների մակնիշով արտադրանքի կարելի է հանդիպել այնպիսի զարգացած արդյունաբերական երկրներում, ինչպիսիք են Անգլիան, ԳՖՀ-ն, Բելգիան, Շվեդիան և այլն։ Հանրապետությունից արտասահման ուղարկվող արտադրանքի 50%-ից ավելին կազմում է մեքենաշինության արտադրանքը։ Դա արդյունք է այն բանի, որ մեքենաշինության արտադրանքի մի շարք տեսակներով Սովետական Հայաստանը ՍՍՀՄ-ում առաջնակարգ տեղ է գրավում։

ԱՍՀՄ եղբայրական հանրապետությունների մեծ ընտանիքի իրավահավասար անդամ Սովետական Հայաստանը 50 տարիների ընթացքում մասնակցել է աշխարհի 45 քաղաքներում կազմակերպված 200 միջազգային ցուցահանդեսների ու տոնավաճառների և ցուցադրել ավելի քան 2000 արտադրատեսակ[30]։

ՀՍՍՀ-ում այժմ գործում են մոտ 700 արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք հագեցված են ժամանակակից տեխնիկայով և ավտոմատացված գծերով։ 1940 թ. համեմատությամբ էլեկտրաէներգիայի արտադրությունը 1974 թ. աճել է մոտ 10,3 անգամ։ Մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի քա-

---

28 Լ. Ի. Բրեժնև, Սովետական Հայաստանի 50 տարին, Երևան, 1970, էջ 4։

29 Նույն տեղում, էջ 12։

30 «Երեկոյան Երևան», 2. II. 1973։

նակով Հայաստանը առաջ է անցել Ֆրանսիայից, Ավստրիայից, Բելգիայից, Իսպանիայից, Ճապոնիայից և ավելի քան 20 անգամ Թուրքիայից։ Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1965 թ. համեմատությամբ 1974 թ. աճել է 134,8%-ով։

Բուռն զարգացում են ապրել գիտությունը, կուլտուրան, արվեստը։ Բավական է նշել, որ հանրապետության բազմաթիվ գիտական հաստատություններում աշխատում է մոտ 16 հազար մարդ։ Մեծ չափով բարձրացել է ժողովրդի նյութական ու կուլտուրական բարեկեցությունը, որի հետևանքով զգալի չափով աճել է հանրապետության բնակչության քանակը։

Եթե 1920 թ. Հայաստանի բնակչությունը 770 հազար էր, ապա 1975 թ. հունվարի 1-ի տվյալներով այն հասել է 2790 հազար մարդու։ Երևանը, որը 1920 թ. ուներ մոտ 30 հազար բնակիչ, այժմ ունի 900 հազար բնակիչ։ Մեծ չափով աճել են նաև Լենինականը, Կիրովականը և հանրապետության բազմաթիվ այլ քաղաքներն ու քաղաքատիպ ավանները։

Սովետական Հայաստանը դարձել է աշխարհով մեկ ցրված հայության հարազատ հայրենիքը։ Դրա փայլուն ապացույցն էր սփյուռքահայության ցուցաբերած օգնությունը սովետական ժողովրդին՝ ֆաշիզմին ջախջախելու գործում։ Սովետական իշխանության տարիներին աշխարհի տարբեր երկրներից հայրենիք է վերադարձել 228 հազար հայ, որոնցից շատերը արտադրության, գիտության ու կուլտուրայի առաջավոր աշխատողներ են, սոցիալիզմի և կոմունիզմի ակտիվ կառուցողներ։

Միայն «Սովետական իշխանության հաղթանակը,— ասել է Լ. Ի. Բրեժնևը,— փրկեց հայ ազգի հնամենի մշակույթը, սոցիալիզմի հաղթանակը վերածնեց այդ տաղանդավոր ժողովրդի հոգևոր կյանքը, լավագույն պայմաններ ստեղծեց նրա բազմակողմանի ծաղկման համար»[31]։

ОТ ГЕЕННЫ К ВОЗРОЖДЕНИЮ

Ц. П. АГАЯН
Академик АН Арм. ССР

Резюме

В годы первой мировой войны правительство младотурок, опираясь на поддержку империалистической Германии, осуществило свою политику геноцида армян. Вследствие этого было уничтожено более 1,5 млн. армян, а остальная часть—более 1 млн. западных армян—будучи вынужденной покинуть свою родину, рассеялась по всему земному шару. Геноцид армян—результат панисламистской, антинародной, националистической политики правительства младотурок. В то же время он стал возможным в результате колониальной, империалистической политики западных держав.

План уничтожения армянского населения Западной Армении и во всей Турции был разработан и утвержден на заседании комитета младотурок, которым руководил министр внутренних дел Талеат. Все участни-

31 Նույն տեղում, էջ 20։

кн заседания, без исключения, голосовали «в пользу полного уничтоже ния всех армян».

В соответствии с этим решением правительство младотурок 15 апреля 1915 г. за подписью военного министра Энвера и идеолога партии младотурок Назима послало циркулярное указание местным властям об уничтожении армян.

24 апреля 1915 г. турецкие власти провели массовые аресты среди армянской интеллигенции. Начался геноцид армянского населения в Турции.

Октябрьская революция в числе других народов принесла свободу и армянскому народу. После установления в 1920 г. Советской власти Армения вступила на путь социального и экономического возрождения. Достигнув крупных успехов в своем развитии, Советская Армения ныне стала республикой высокоразвитой индустрии, социалистического сельского хозяйства и передовой культуры.